

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ գնումների բողոքարկման խորհուրդը որոշեց հաստատել

#### ԿԱՐԳ

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐԽՈՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԾՆԵՐ

1. «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 46-րդ հոդվածի համաձայն ստեղծվում է գնումների բողոքարկման խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ), որը լինելով անշահախնդիր և անկախ միավոր, ապահովում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գնումների ընթացակարգերի օրինականությունը:

2. Սույն Կարգը կանոնակարգում է Խորհրդի աշխատակարգն ու որոշումների կայացման գործընթացը:

3. Խորհուրդն՝ օրենքով սահմանված լիազորություններն իրականացնելու և կարգի դրույթներն իրավակիրառելու ընթացքում, առաջնորդվում է օրինականության, թափանցիկության և հրապարակայնության, գաղտնիության, արդյունավետության, պատշաճության, կարճ ժամկետներում որոշումներ կայացնելու և մասնագիտական անաչառության սկզբունքներով:

4. Օրենքի 46-րդ հոդվածի համաձայն Խորհրդի անդամների ցուցակը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը: Խորհրդի անդամները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիներ են, որոնք պետք է ունենան գնումների մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության իմացության բավարար մակարդակ:

5. Խորհուրդը և Խորհրդի անդամներն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ են գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից: Բողոքի քննության ժամանակ նրանք չեն հանդիսանում քննվող գործի մասնակից կամ իր թեկնածությունն առաջադրած կազմակերպության ներկայացուցիչ և պարտավոր են ղեկավարվել բացառապես օրենքով և կիրառել այն:

6. Խորհրդի անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են բացառապես Օրենքի 46-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգով:

7. «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետև՝ Կենտրոն) կանոնադրության III բաժնի 12-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն Կենտրոնը հանդես է գալիս որպես գնումների բողոքարկման խորհրդի քարտուղարություն, մասնավորապես՝

- կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.
- յուրաքանչյուր դեպքում ձևավորում է Խորհրդի հանձնաժողովի կազմը.
- ստանում է Խորհրդին հասցեագրված բողոքները և Խորհրդի համապատասխան հանձնաժողովին ներկայացնում յուրաքանչյուր բողոքը (այդ թվում՝ դիմումները, իրավասու մարմնի հիմնավորումները և գնումների ընթացակարգին առնչվող համապատասխան փաստաթղթերը).
- մինչև ընթացիկ տարվա ապրիլի 1-ը Խորհրդի հաստատման է ներկայացնում նախորդ տարվա Խորհրդի գործունեության մասին տարեկան հաշվետվությունը.
- իրագեկում է հանրությանը Խորհրդի ընդհանուր գործունեության մասին.
- կազմակերպում և վարում է Խորհրդի լիազումար նիստերը.
- պատասխանատու է Խորհրդի հաշվապահական հաշվառման և ֆինանսական, իրավական և ընդհանուր բնույթի այլ հարցերի համար.

- վարում է Խորհրդի և դրա հանձնաժողովների արձանագրությունները.
- գրանցում է փաստաթղթերը, կազմակերպում է գաղտնի փաստաթղթերի անվնաս պահպանումը.
- հրապարակում է խորհրդի որոշումները,- պատասխանատու է տվյալների պատրաստմանը և տեղեկատվական համակարգերի պահպանմանն առնչվող մասնագիտական և տեխնիկական գործունեության համար:

## II. ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

8. Գնումների բողոքարկման խորհուրդը իր գործունեությունն իրականացնում է խորհրդի ընդհանուր ժողովի և հանձնաժողովների միջոցով: Խորհրդի ընդհանուր ժողովը կազմված է Խորհրդի բոլոր անդամներից: Խորհրդի ընդհանուր ժողովը՝

- ընդունում և հաստատում է Խորհրդի գործունեության կարգը և փոփոխություններ կատարում դրանում.

- Կենտրոնի ներկայացմամբ քննարկում և հաստատում է Խորհրդի գործունեության մասին տարեկան հաշվետվությունը:

Կենտրոնի պետի որոշմամբ խորհրդի ընդհանուր ժողովը հրավիրվում է առնվազն տարին մեկ անգամ: Առանձին անհետաձգելի լուծում պահանջող հարցերի դեպքում բողոքարկման խորհուրդը կարող է հրավիրել արտահերթ նիստ: Արտահերթ նիստ կարող է հրավիրվել Կենտրոնի պետի խորհրդի անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ կամ բողոքը քննող հանձնաժողովի նախաձեռնությամբ:

Խորհրդի ընդհանուր ժողովը նախագահում է Կենտրոնի պետը կամ վերջինիս կողմից լիազորված՝ Կենտրոնի ներկայացուցիչը:

Ընդհանուր ժողովի նիստից առնվազն 5 օր առաջ Կենտրոնը ծանուցում է Խորհրդի բոլոր անդամներին լիազումար նիստի անկացման օրվա, տեղի, ժամի մասին: Խորհրդի անդամները պարտավոր են մասնակցել Խորհրդի լիազումար նիստին, իսկ մասնակցության անհնարինության դեպքում Խորհրդի անդամը այդ մասին նախապես տեղեկացնում է Կենտրոնին: Խորհրդի լիազումար նիստը իրավագոր է, եթե ներկա են Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների 2/3-ով՝ բաց քվեարկությամբ: Խորհրդի բոլոր անդամներն ունեն մեկ ձայնի իրավունք: Խորհրդի անդամները որոշումներն ընդունում են «կողմ» կամ «դեմ» քվեարկելով:

9. Օրենքի 47-րդ հոդվածով նախատեսված՝ ստացված յուրաքանչյուր բողոքը քննելու համար խորհրդի անդամներից ձևավորվում է երեք անձից բաղկացած հանձնաժողով: Հանձնաժողովի կազմի ընտրությունը կատարում է Կենտրոնը՝ ռոտացիոն կարգով՝ պատահական ընտրությամբ:

10. Հանձնաժողովը կազմավորվում է Կենտրոնի պետի հրամանով, կազմված է նախագահից և 2 անդամներից: Հանձնաժողովի նախագահն ընտրվում է հանձնաժողովի կազմից՝ ընտրական կարգով: Հանձնաժողովը քննում է բողոքը և խորհրդի անունից որոշում ընդունում՝ Օրենքին և իրավական այլ ակտերին համապատասխան:

11. Օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ առանձին ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող խորհրդի անդամներն ինքնաբացարկ են հայտնում տվյալ ընթացակարգից, հակառակ դեպքում նրանց բացարկ է հայտնում հանձնաժողովի նախագահը: Եթե առանձին ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունի հանձնաժողովի նախագահը, ապա նա բացառում է իր մասնակցությունը տվյալ ընթացակարգին և տվյալ ընթացակարգում նրան փոխարինում է խորհրդի մեկ այլ անդամ: Հանձնաժողովի անդամները ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն (օրինակելի ձևն՝ ըստ հավելվածի):

12. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով Լեռնային Գարաբաղի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու դեպքում գործի քննությունը ընթանում է սույն Կարգով բողոքի քննության համար նախատեսված եղանակով:

13. Հանձնաժողովը որոշում է ընդունում Խորհրդի անունից՝ ղեկավարվելով Օրենքով և իրավական այլ ակտերով: Հանձնաժողովի բոլոր որոշումներն ընդունվում են անդամների ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ: Հանձնաժողովի բոլոր անդամները, այդ թվում՝ նախագահը, ունեն մեկ ձայնի իրավունք և քվեարկում են «կողմ» կամ «դեմ»:

14. Հանձնաժողովի նիստերը վարում է նախագահը: Նիստերը, որպես կանոն, տեղի են ունենում Կենտրոնի տարածքում:

15. Յուրաքանչյուր հանձնաժողով ղեկավարվում է նույն կամ նման դեպքերում կայացված նախորդ որոշումներով: Կարևոր իրավական կամ մասնագիտական հարցերի վերաբերյալ հանձնաժողովի տեսակետները պետք է հրապարակվեն ֆինանսների նախարարության (այսուհետ՝ լիազորված մարմին) համացանցային կայքում՝ Խորհրդի որոշումների հետևողականությունը երաշխավորելու համար:

16. Խորհրդի երեք անդամներից բաղկացած յուրաքանչյուր հանձնաժողով իր որոշումների համար պատասխանատու է բողոքարկման ընթացակարգի կողմերի և հանրության առջև:

### III. ԽՈՐՀՐԴԻ ԱՆ ԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. Խորհրդի յուրաքանչյուր անդամ պարտավոր է՝

- ընտրվելու դեպքում մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին, որոշումներ ընդունել՝ ղեկավարվելով Օրենքով և իրավական այլ ակտերով.
- պատասխանատվություն կրել իր ընդունած որոշումների համար և ապահովել այդ որոշումների իրավական հիմնավորում.
- ակտիվորեն մասնակցել Խորհրդի ընդհանուր ժողովի աշխատանքներին.
- համագործակցել/մասնակցել տարեկան հաշվետվությունների համար առաջարկների պատրաստմանը.
- ուսումնասիրել գնումների մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությունն ու պրակտիկան:

### IV. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

18. Բողոքարկման ընթացակարգը սկսվում է, երբ Օրենքով նախատեսված կարգով կենտրոնի քարտուղարություն է ներկայացվում բողոք: Խորհրդին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված՝ Կենտրոնին, ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյան 25, հասցեով: Ներկայացված բողոքը գրանցվում է և տրվում է մտից համար: Բողոքը ստանալու օրվանից 1 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնը ստուգում է դրա համապատասխանությունը Օրենքով սահմանված պահանջներին: Եթե ներկայացված բողոքը բավարարում է սահմանված պահանջներին, ապա Կենտրոնը 1 աշխատանքային օրվա ընթացքում ձևավորում է բողոքը քննող հանձնաժողով և ապահովում բողոքի քննարկումը:

19. Բողոքը քննարկման ընդունելու դեպքում բողոքի ստացման և դրա քննարկման մասին Կենտրոնը տեղեկագրում հայտարարություն հրապարակելու նպատակով 1 աշխատանքային օրվա ընթացքում լիազորված մարմին է ներկայացնում անհրաժեշտ տեղեկություններ և նույն ժամկետում բողոքի մասին տեղյակ է պահում պատվիրատուին:

Եթե բողոքը չի բավարարում օրենքի 48-րդ հոդվածի պահանջները, ապա Կենտրոնը Խորհրդի անունից այդ մասին տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու հնգօրյա ժամկետ, իսկ պայմանագիր կնքելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում՝ ոչ ավել, քան օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածի վերջին օրը:

20. Ստացված յուրաքանչյուր բողոքը քննելու համար խորհրդի անդամներից ձևավորվում է երեք անձից բաղկացած հանձնաժողով, կենտրոնի աշխատակիցներից նշանակվում է հանձնաժողովի քարտուղար (այսուհետև՝ քարտուղար): Բողոքին տրվում է ծածկագիր՝ «ԳԲԽ» տառերից և հերթական համարից: Հանձնաժողովի աշխատանքներին նրա անդամի մասնակցության անհնարինության դեպքում վերջինիս փոխարեն հանձնաժողովի կազմում ընդգրկվում է նոր անդամ՝ հանձնաժողովի ձևավորման նույն սկզբունքով:

21. Հանձնաժողովի ձևավորման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարն էլեկտրոնային կամ թղթային եղանակով հանձնաժողովի անդամներին հայտնում (ծանուցում) է հանձնաժողովի ձևավորման, ինչպես նաև ստացված բողոքի վերաբերյալ տեղեկություններ:

22. Հանձնաժողովի առաջին նիստից հետո հրավիրվող յուրաքանչյուր նիստից առաջ՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, քարտուղարն էլեկտրոնային կամ թղթային եղանակով պատշաճ կարգով ծանուցում է կայանալիք նիստի մասին, պատվիրատուին և բողոքը ներկայացրած անձին:

23. Կենտրոնը հանձնաժողովի ձևավորումից հետո Խորհրդի անունից բողոքարկվող գնման ընթացակարգի պատվիրատուից, բողոքարկող անձից, մասնակցից, այլ անձանցից կարող է պահանջել անհրաժեշտ տեղեկություններ:

24. Սույն կարգի 21-րդ կետում նշված ծանուցմանը հաջորդող երրորդ աշխատանքային օրը հրավիրվում է հանձնաժողովի առաջին նիստը, որտեղ քարտուղարը ներկայացնում է Կենտրոնի կատարած հարցումները և հանձնաժողովը որոշում է բողոքը քննարկելու համար անհրաժեշտ գործողությունների ցանկը, այդ թվում լրացուցիչ տեղեկությունների, փաստաթղթերի ձեռքբերման, փորձագետների (մասնագետների) ներգրավման, պետական մարմիններից և (կամ) այլ կազմակերպություններից դիրքորոշում ստանալու անհրաժեշտությունը և սահմանում է հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

25. Խորհուրդը կայացնում է բողոքը ներկայացրած անձի պահանջած ժամանակավոր միջոցը կիրառելու մասին որոշում, եթե նման միջոցը պատշաճ և անհրաժեշտ է ակնկալվող վնասը մինչև բողոքի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը կանխելու համար:

Խորհուրդը հաշվի է առնում ժամանակավոր միջոցի հնարավոր հետևանքները բոլոր այն շահերի, այդ թվում՝ հանրային շահի համար, որոնք կրելու են վնասներ, և կարող է ընդունել նման միջոց չկիրառելու մասին որոշում, եթե դրա բացասական հետևանքները կարող են գերազանցել օգուտը:

Ժամանակավոր միջոց չկիրառելու մասին որոշումը չի կարող ազդել նման միջոցի դիմած անձի որևէ այլ հայցի վրա:

Բողոքը ինքնաբերաբար չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը, սակայն մինչև խորհրդի կողմից սույն կետի 1-ին կամ 2-րդ պարբերություններով նախատեսված որոշման ընդունումը պատվիրատուն իրավունք չունի պայմանագիր կնքելու:

26. Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակցի գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

27. Բողոքը քննարկվում է Կենտրոնում և նախապատրաստվում է եզրակացություն բողոքի վերաբերյալ, որը ներկայացվում է հանձնաժողովին: Բողոքների վերաբերյալ եզրակացության նախապատրաստման աշխատանքների շրջանակներում, հանձնաժողովի և/կամ Կենտրոնի նախաձեռնությամբ կարող են կազմակերպվել քննարկումներ, որոնց կարող են ներգրավվել փորձագետներ, խորհրդատուներ (մասնագետներ) և այլ շահագրգիռ անձինք: Քննարկումները կազմակերպվում են նիստերի միջոցով, որոնց վերաբերյալ կազմված արձանագրությունները կցվում են բողոքի քննարկման ընթացակարգի արձանագրությանը: Բողոքի վերաբերյալ Կենտրոնի եզրակացության նախագիծը Կենտրոնը տրամադրում է հանձնաժողովի անդամներին՝ բողոքի քննարկման վերջին նիստից առնվազն 2 աշխատանքային օր առաջ: Հանձնաժողովի անդամները եզրակացության վերաբերյալ առաջարկությունների առկայության դեպքում դրանք ներկայացնում են Կենտրոնին՝ նախագիծը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Հանձնաժողովի անդամի կողմից ստացված առաջարկություններն ընդունելու դեպքում Կենտրոնը դրանք ներառում է եզրակացության մեջ, հակառակ դեպքում այդ առաջարկությունները քննարկվում են հանձնաժողովի նիստում: Հանձնաժողովի համար կենտրոնի ներկայացրած կարծիքն իրավապարտադիր չէ:

28. Բողոքի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով հանձնաժողովի աշխատանքներին Կենտրոնի առաջարկությամբ և (կամ) հանձնաժողովի որոշմամբ կարող են ներգրավվել փորձագետներ, խորհրդատուներ (մասնագետներ) և այլ անձինք: Փորձագետների, խորհրդատուների (մասնագետների) ներկայացրած եզրակացություններն ու առաջարկություններն ունեն խորհրդատվական բնույթ և պարտադիր չեն հանձնաժողովի համար:

29. Հանձնաժողովի համաձայնությամբ բողոք ներկայացնողն իր հաշվին կարող է փորձագետներ (մասնագետներ) հրավիրել բողոքի քննարկմանը մասնակցելու համար: Այդ դեպքում

հանձնաժողովին ներկայացվում են այդ փորձագետների (մասնագետների) համապատասխան որակավորմանը և աշխատանքային փորձին վերաբերող փաստաթղթեր:

30. Հանձնաժողովի նիստին բողոք ներկայացնող անձի և (կամ) քննարկմանը մասնակցող այլ անձանց չներկայանալն արգելք չէ բողոքի քննարկման համար: Սակայն հանձնաժողովն իրավասու է նրանցից որևէ մեկի չներկայանալու դեպքում հետաձգել նիստը, եթե անհնարին է համարում բողոքի քննարկումը տվյալ նիստի ընթացքում:

31. Օրենքի 48-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն հանձնաժողովը կարող է կազմակերպել բանավոր լսումներ: Բանավոր լսումներ կազմակերպելուց առնվազն 3 (երեք) օր առաջ բողոք ներկայացրած անձը, պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերը թղթային կամ էլեկտրոնային եղանակով տեղեկացվում են այդ մասին: Բանավոր լսումները, որպես կանոն, բաց են, սակայն հանձնաժողովի Բողոքի քննարկումն սկսվում է Կենտրոնի քարտուղարի զեկուցումով, որը ներկայացնում է բողոքի քննարկման նախնական արդյունքները և կենտրոնի եզրակացությունը:

32. Հետագա քննարկումը կատարվում է հետևյալ հաջորդականությամբ՝

- 1) հանձնաժողովի անդամների ելույթները.
- 2) բողոք ներկայացրած անձի պատասխանները հանձնաժողովի անդամների հարցերին,
- 3) պատվիրատուի պատասխանները Հանձնաժողովի անդամների հարցերին,
- 4) բողոքի քննարկման նիստին ներկա այլ անձանց ելույթները՝ այդպիսիք լինելու դեպքում:

33. Որոշմամբ կարող են կազմակերպվել դռնփակ լսումներ, եթե քննարկման առարկա են հանդիսանում պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող տեղեկություններ:

34. Հանձնաժողովը քննում է բողոքը և Խորհրդի անունից որոշում ընդունում՝ ղեկավարվելով Օրենքով և իրավական այլ ակտերով: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների մեծամասնությամբ:

35. Հանձնաժողովի անդամները որոշում են ընդունում հանձնաժողովի փակ նիստում, որին չեն մասնակցում հանրության ներկայացուցիչները կամ ներգրավված կողմերը: Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից: Բողոքի վերաբերյալ որոշումն ընդունվում և հրապարակվում է բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան քսան օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

- Կենտրոնը կազմում է տղագրություն կամ արձանագրություն, որը, մասնավորապես, պարունակում է՝
- տեղեկություններ նիստի օրվա, ժամի և վայրի մասին,
  - հանձնաժողովի բոլոր անդամների անուններն այբբենական կարգով՝ սկսելով նախագահից,
  - հնչեցրած կարծիքների համառոտ նկարագրությունը,
  - յուրաքանչյուր բողոքի վերաբերյալ ընդունված որոշումը՝ նշելով կողմ և դեմ քվեարկած անդամներին:

36. Վերջնական որոշումն ընդունվելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնը ուղարկում է այն ներգրավված կողմերին, բացառությամբ պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող որոշումների, և հրապարակում լիազորված մարմնի համացանցային կայքում: Միջանկյալ որոշումն ուղարկվում է միայն ներգրավված կողմերին:

37. Եթե հանձնաժողովի անդամներից երկուսը համարում են, որ երրորդ անդամն ունի շահերի բախում, նրանք այդ մասին տեղեկություններ են ներկայացնում Կենտրոն, որը պարտավոր է ընտրել հանձնաժողովի նոր անդամ:

38. Խորհրդի և Հանձնաժողովի անդամների բողոքարկման խորհրդի գործառույթներով պայմանավորված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության այլ մարմինների հետ կապերը կազմակերպում է Կենտրոնը:

39. Կարգում փոփոխություններ և լրացումներ կատարվում են Կարգի ընդունման ընթացակարգով:

40. Սույն Կարգը ուժի մեջ է մտնում Խորհրդի անդամների կողմից դրա հաստատմանը հաջորդող օրը և այն տեղադրվում է լիազորված մարմնի համացանցային կայքում:

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մույն հայտարարությամբ հաստատվում է, որ N ԳԲԽ- /12 բողոքի շրջանակներում բացակայում է նշված բողոքը քննող հանձնաժողովի անդամների շահերի բախում:

ք. Ստեփանակերտ, Վ.Սարգսյան 25  
2012թ. ժամը

Հանձնաժողովի նախագահ՝

\_\_\_\_\_  
(ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝

\_\_\_\_\_  
(ստորագրություն)

\_\_\_\_\_  
(ստորագրություն)